

« ՀԱՅ ԼԵԶՈՒՆ ՏՈՒՆՆ Է ՀԱՅՈՒՆ »

Փետրվարի 22-ին ԼՂՀ ԿԳՍ նախաձեռնությամբ ակադեմիկոս Մերգեյ Արրահամյանի անվան հայոց լեզվի ամբիոնի անմիջական մասնակցությամբ կազմակերպվել է միջոցառում՝ նվիրված մայրենիի օրվան:

Միջոցառմանը ներկա էին ԼՂՀ ԿԳՍ նախարար Մլախիկ Ասրյանը, փոխնախարար Արմեն Մարգարյանը, ԿԳՍ նախարարության ԼՏՊ Արտակ Դուլյանը, պատգամավորներ, ոլորտի պատասխանատուներ, ուսուցիչներ, աշակերտներ, համալսարանականներ:



Ի հիշատակ 1952 թվականին Դաքայում ոստիկանների կրակոցներից սպանված մի խումբ երիտասարդների, ովքեր դուրս էին եկել բողոքելու ուրդուն միակ պետական լեզու ճանաչելու կառավարության որոշման դեմ, 1999 թվականից ի վեր ՅՈՒՆԵՍԿՕ-ն նշում է Մայրենի լեզվի միջազգային օրը, իսկ 2008 թվականը հռչակել է Լեզուների միջազգային օրը: Միջազգային այս տոնն արդեն մի քանի տարի է, ինչ պետականորեն նշում ենք նաև մենք՝ հայերս. 2005 թվականին մեր երկրում փետրվարի 21-ը պաշտոնապես հռչակվել է Մայրենի լեզվի օր:

Շնորհավորանքի իր խոսքում ԼՂՀ ԿԳՍ փոխնախարար Արմեն Մարգարյանը կարևորել է մայրենիի դերը և հորդորել մայրենիի պահպանության և պաշտպանության մասին չխոսել միայն մեկ օր, այլ ամբողջ տարի, քանի որ հայը այն ազգն է, որը մշտապես մտահոգ է եղել լեզվական ինքնության պահպանմամբ: «Հայերիս համար մայրենին ի սկզբանե եղել է մեր անկախության, մեր

գոյատևման գրավականը և այսօր շարունակում է մնալ այդպիսին», - ասել է նա: Խոսելով օրվա պատմության և խորհրդի մասին՝ լեզվի տեսչության պետ Ա. Դուլյանը պատահական չի համարում այն, որ հայոց լեզուն ընդգրկված է աշխարհի ամենագրեցիկ 50 լեզուների շարքում, և դա այն դեպքում, երբ աշխարհում գոյություն ունեն

ավելի քան 6000 լեզուներ: Սակայն ցավալի է արձանագրել, որ արևմտահայերենը հայտնվել է կարմիր գրքում:

«Միտենք, փայլայե՞նք ու զարգացնենք մեր լեզուն, պահանջկոտ գտնվենք ինքներս մեր հանդեպ՝ ամենօրյա հարողակցության մեջ, բանավոր և գրավոր խոսքում: Տուրք չտանք օտարաբանություններին, օտար լեզվամտածողության դրսևորումներին և ոչ հայեցի արտասանությամբ չմեղանշենք մայրենիի վեհության առջև», - ասել է Ա. Դուլյանը:

Տոնի կապակցությամբ մայրենի լեզուն անադարտ պահելու գործում ունեցած ավանդի համար տեսչության կողմից պարգևատրվել են լրագրողներ, աշակերտներ, լեզվի մասնագետներ:

Հայոց լեզվի ամբիոնի դոցենտ Շուշանիկ Սաղյանը իր ելույթում անդրադարձել է հայոց լեզվի՝ որպես հայի ինքնության պահպանման և մշտագոյության երաշխիքի և նրա անադարտության հարցերին: Ըստ նրա՝ մայրենի լեզվի օրվա նշանավորումը միտում է «մեծարելու մարդկային արժեհամակարգի մի դրսևորում, որ համընդունելի է և ենթակա չէ արժեզրկման կամ արժեփոխման»:

Միջոցառման երկրորդ մասում ասումների, պարային և երաժշտական կատարումներով հանդես են եկել ուսանողներ և աշակերտներ:

«ԼՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՄՊՐԵԼՈՒ ՁԵՎ Է». Ն. ԳԱՍՊԱՐՅԱՆ

Փետրվարի 26-ին ԱրՊՀ լրագրության բաժնի դասախոսների և ուսանողների հետ հանդիպում են ունեցել Արցախի Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի նախագահ Նորել Գասպարյանը և գլխավոր խմբագիր Արմինե Հայրիյանը:



Հանդիպման բացման խոսքում ԱրՊՀ ռեկտոր Մանուշ Մինասյանը շնորհակալություն է հայտնել հանդիպման համար, կարևորել նման ձևաչափով հանդիպումները՝ արդյունավետ մասնագիտական քննարկումներ և զրույցներ կազմակերպելու առումով:

Ն. Գասպարյանը նախ համառոտ ներկայացրել է հանրային հեռուստատեսության հիմնադրման և կազմավորման պատմությունը, անդրադարձել հեռուստատեսային այսօրվա պահանջներին և առկա հնարավորություններին, ժանրային առանձնահատկություններին, ծրագրերին և այլն:

Խոսելով լրագրողի մասնագիտության մասին՝ վաստակավոր լրագրողն այն կարծիքն է հայտնել, թե լրագրությունը չի կարող լինել ապրելու միջոց, «այն ապրելու ձև է, ապրելու փիլիսոփայություն»: Ըստ նրա՝ մեր պայմաններում լինել լրագրող նշանակում է ճանաչել երկիրը, երկրի բնակիչներին, կիսել նրանց հոգսերը, ապրել նրանց փնդիրներով. այլ կերպ հնարավոր չէ կայանալ:

Կարճ ներածականից հետո հանդիպումը երկխոսության ձևով անցկացնելու համար Ն. Գասպարյանը ներկայանրին առաջարկեց խոսել իրենց հուզող հարցերից, ներկայացնել առաջարկներ:

Ուսանողների հարցերն առավելապես վերաբերում էին հեռուստատեսային ոլորտում աշխատանք գտնելուն, հեռուստատեսությունում երկարաժամկետ փորձուսուցում անցնելուն, ինչպես նաև ազատ լրագրությանը, մասնագիտական կրթությանը, ներկայիս լրագրողին ներկայացվող պահանջներին և այլն:

Այն հարց-մտահոգությունը, որ այսօր հեռուստատեսության հաստիքները համալրված են ոչ մասնագետներով, այնինչ լրագրության բաժնի շրջանավարտները աշխատանքի խնդիր ունեն, Ն. Գասպարյանը արդարացված է միանշանակ չհամարեց: Խորհրդի նախագահը շփոթեց, որ հանրային հեռուստատեսությունում ոչ մասնագետները գերակշռում են, սակայն, ըստ նրա, լրագրողի որակավորում չունենալը դեռևս չի խոսում լրագրողական որակների բացակայության մասին, և հակառակը: «Լրագրող

պետք է լինել ոչ թե մասնագիտությամբ, այլ էությանբ», - ասել է նա: Ազատ լրագրության և ազատ խոսքի վերաբերյալ Ն. Գասպարյանի կարծիքը միանշանակ էր. «Ազատ լրագրությունը պետությանը սատարող լրագրությունն է, ազատ խոսքը պետականամետ խոսքն է, որը չի կարելի շփոթել իշխանամետի հետ»:

Ուսանողներին՝ իբրև պոտենցիալ կադրերի, հետաքրքրում էին նաև հեռուստառադիոընկերության ղեկավարության՝ իբրև գործատուի պահանջները այս կամ այն հաստիքի համալրման քաղաքականության առումով: Պատասխանը կարճ էր և միանշանակ՝ «Գրագիտություն, նվիրվածություն, խոսքի մշակույթ, արտաքին տեսք»:

Հանդիպման վերջում համագործակցության նախնական պայմանավորվածություն ձեռք բերվեց, որը ենթադրում է ոչ միայն դասախոսություններ և հանդիպումներ, այլև գործնական պարապմունքներ:

Չորեքշաբթի



Կենսաբանության ամբիոնը ջերմորեն շնորհավորում է ամբիոնի հիմնադիր, գիտության երախտավոր, ա.գ.թ., դոցենտ, թոշակառու դասախոս Արամայիս Բախշիի Աղասյանին ծննդյան 80-րդ տարեդարձի կապակցությամբ, ցանկանում քաջ առողջություն և արևշատություն:

Ա. Բ. Աղասյանը ծնվել է 1936թ. հունվարի 12-ին, ԼՂՀ Մարտակերտի շրջանի Քոլատակ գյուղում: Ավարտելով տեղի յոթամյա դպրոցը՝ 1951թ. ընդունվել է Ստեփանակերտի գյուղատնտեսական տեխնիկումի անասնաբուժական ֆակուլտետը: 1955թ. ընդունվել է Երևանի գոտանասնաբուժական ինստիտուտի անասնաբուժական ֆակուլտետը: 1965թ. ավարտել է Հայկական պետական մանկավարժական ինստիտուտը, ստացել միջնակարգ դպրոցի քիմիայի և կենսաբանության ուսուցչի որակավորում: 1974թ. պաշտպանել է գիտական ատենախոսություն և աշխատանքի անցել ԱրՊՀ-ում:

Տարբեր տարիների Ա. Աղասյանը զբաղեցրել է քիմկենսաբանության ամբիոնի վարիչի և ֆակուլտետի ղեկանի պաշտոնները:

Վաստակաշատ գիտնականի հաջողությամբ սկսած գործն այսօր պատվախնդրորեն շարունակում են ավագ դուստրը՝ կ.գ.թ., դոցենտ Մուսաննա Աղասյանը և թոռը՝ կ.գ.թ. Մարատ Ջահանգիրյանը: